

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/4

1 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ 29.01.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.01.2016 թ-ի թիվ 159/02 որոշման դեմ:

«Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Ի պատասխան 21.01.2016թ-ի թիվ 159/02 որոշման, որով «Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) պետական տուրքի գծով չկատարված պարտավորությունների համար ենթարկվել է տուգանքի 513.791 դրամի չափով, որից ապառք 50.000 դրամ, տույժ 463.791 դրամ, ընկերությունը հայտնում է, որ համաձայն չէ նշված որոշման հետ, հաշվի առնելով այն փաստը, որ Կենտրոնի հարկային տեսչությունից 2015թ-ին վերցվել են մնացորդի վերաբերյալ տեղեկանքներ, որտեղ երբևիցե չի նշվել, որ Ընկերությունը պետական տուրքի գծով ունի ապառք:

Որոշումը ստանալուց հետո ընկերության տնօրենը այցելել է Կենտրոնի հարկային տեսչություն պարզաբանելու, թե որտեղից է առաջացել վերոհիշյալ ապառքը:

Երկու օրվա փնտրտուքից հետո պարզվել է, որ իրենք սխալվել են: Այդ մասին է փաստում Կենտրոն հարկային տեսչության կողմից 27.01.2016թ-ին տրամադրված տեղեկանքը, որի համաձայն պետական տուրքի գծով ընկերությունը ունի ոչ թե ապառք, այլ՝ գերավճար:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է 21.01.2016թ. թիվ 159/02 որոշումը չեղյալ ճանաչել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ռաուանասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 20.01.2016 թ-ի դրությամբ ընկերության չկատարված պարտավորությունները պետական տուրքի գծով կազմում են 513.791 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 29.04.2015թ-ից և երթակա է գանձման:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 21.01.2016 թ-ին ընդունվել է թիվ 159/02 որոշումը (այսուհետ նաև

Որոշում) «Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ-ից 513.791 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշումը կայացվելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ըստ «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների 20.01.2016թ-ի դրությամբ «Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ-ի պետական տուրքի գծով պարտքը կազմել է ընդամենը 513.791 դրամ: Որոշումը ստանալուց հետո ընկերության տնօրենն այցելել է Կենտրոնի ՀՏ՝ պետական տուրքի գծով պարտավորության առաջացման հիմքերի պարզաբանման նպատակով:

Կենտրոնի ՀՏ-ում ընկերության տնօրենի կողմից բերված փաստարկների ուսումնասիրության արդյունքում կատարվել է պարտավորությունների վերահաշվարկ: Արդյունքում, ըստ «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների 27.01.2016թ-ի դրությամբ պետական տուրքի գծով ընկերությունում առաջացել է ոչ թե պարտավորություն, այլ՝ 1.962.533 դրամի իրական գերավճար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.01.2016 թ-ի թիվ 159/02 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ